ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 դեկտեմբերի 2023 թվականի N 543 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 235-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրենի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի գրությունը և Ագարակի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 2 արձանագրությունը՝

ո ր ո շ ու մ ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի «Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի N 241-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 235-Ա որոշման N 26 հավելվածում «Հայրապետյան Կամո» և «Օհանյան Նարինե» բառերը փոխարինել «Հարությունյան Գայանե» և «Գևորգյան Արփինե» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.Ղուկասյան**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023 թ. դեկտեմբերի 28

ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290